

ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Պոչխարիոյ համար	12 ֆր.
սարկիսի վեցամսեայ	7 "
Արտասահմանի համար սարկիսի վեցամսեայ	15 ֆր.
վեցամսեայ	8 "
Անկերիկայի համար սարկիսի վեցամսեայ	3 սյ.
վեցամսեայ	1.50 "

Ծանուցման տողը սուստի կրեպի համար 40 սանթիմիտի վերջին կրեպի համար 20 սանթիմիտի կրեպի սակի սնկալեւերու համար 20 0/0 զեղը կրկնայ:

Վառնայի համար ձեռքի 40 սանթիմիտի

ՇԱՐՇՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՈՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԶՈՐԵՔՇՈՒԹԻ ԵՒ ՇՈՒՐ ՕՐԵՐԸ

ОГОВОРИТЕ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նամակ եւ գրամ զի կից խմբագրութեան հասցիին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoun" Varna (Bulgarie)

Պոչխարիոյ համար ձեռքի

15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար ձեռքի

20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ չեմ տրուի

ՇՈՒՐԻՆՍԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԱՆԿԻՆԸ ՊԷՏԻ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

Ս. ԳՍԲՐԻԷԼԵԱՆ

Գլխաւոր Գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԷ ԵՐԱՇ. ԽԱՒՈՐԸԱՂ ՄՕՅԻՄ ՔԱՂԱՔԻ ՎԻՃԱ. ԿԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ

Տոմսակ գնել փափաքողները կրնան իրեն գիտել Չար-Պորիս փողոց Վառնա

ԱՆԿԼՕ—ՈՒՍՍԱԿԱՆ
ՀԱՄԱԶՍԵՆՈՒԹՅՈՒՆ
Ե
ՀՍԵԿՅԱՆ ՀԱՐՑԸ

Անգլիա ու Ռուսիա, Արեւելեան հարցով ամենէն աւելի հետաքրքրուող երկու մեծ եւրոպական տէրութիւնները, սկսած են փոխել իրենց հայեացքները այդ խնդրին վրայ. եւրոպական մամուլին մէջ մերթ ընդ մերթ երեւցող կիսապաշտօնական գորութիւնները, արդի պետական պաշտօնի վրա եղող աճանաւորութեանց յայտարարութիւնները, հայեացքներու այս փոփոխութիւնը կը ցոլացնեն իրենց մէջ:

Անգլիան որ ժամանակ մը Ռուսիոյ սահմանակից գաւառներէն հայկական ինքնավար իշխանութիւն մը կազմելով այդ տէրութեան յառաջիկայութեանց դէմ պատուար մը կանգնել կը խորհէր, 95—96ի անյաջողութիւններէն ետքը, ետ կեցաւ այդ ծրագրէն, համոզուելով որ անոր գործադրումը իր կողմէն կարեւորութեամբ մը կը պահանջէ, իսկ առանց այդ ա. ի ս. քին անկարելի է նպատակին հասնիլ, քանի որ Ռուսիոյ ընդդիմութիւնը անխուսափելի է. իսկ միւս տէրութեանց գործնական աջակցութիւնը խիստ տարակուսելի:

Ճէյմս Պրայս, իլատսթօնէն ետքը հայոց ամենէն բարեկամ Անգլիոյ պաշտօնական անձնաւորութիւնը, այսօր բացարձակօրէն համոզուած է թէ իր տէրութիւնը հայոց նպատակներ ոչ մէկ բան պիտի կարենայ ընել առանց

միւսներուն, մանաւանդ Ռուսիոյ աջակցութեան: Մենք առիթ ունեցանք, զանազան պարագաներու մէջ անոր արտայայտած կարծիքները հազորդել մեր ընթերցողներուն: Վերջերս Ճէյմս Պրայս յոյս կը յայտնէր թէ Ռուսիա այլեւս չի պիտի հակառակի Անգլիոյ, Պրայս օրկու կարելիութիւն կը տեսնէր հայկական խնդրին լուծման, կամ հայկական ինքնավարութեան մը ստեղծումը կամ Ռուսիոյ թեւարկութիւնը:

Որքան ալ սրտանց ցանկացող մը ըլլայ առաջինին, Պրայս կընդունի միանգամայն թէ, փոխանակ ձգելու որ Փոքր Ասիոյ հայկական գաւառներու քրիստոնեայ բնակչութիւնը թրքական վարչապետ Ռեշիտի տակ բնաջինջ ըլլայ հետզհետէ, լաւ է համաձայնիլ Ռուսիոյ հետ որ, զանոնք իր պաշտպանութեան տակ առնէ ու բարեկարգէ այդ գաւառները:

Միւս կողմէ Ռուսիա, ճարունէն կրած պարտութենէն և վեր, իր մեծամիտ ու անիմաստ ծրագրիներուն ջախջախուիլը և անոնց հասուցած աղէտները տեսնելով, սկսած է սթափիլ, և այն եզրակացութեան հասնիլ թէ առանց Անգլիոյ հետ համաձայնութեան, իր գիրքը և նոյն իսկ իր արդի գոյութիւնը վտանգի ենթակայ է: Այլեւս չուզեր ու չի կրնար ալ այն խորիտ ու արհամարհական ընթացքը բռնել Անգլիոյ կամ անոր կողմէ եղած առաջարկի մը հանդէպ: Մեր ընթերցողները գիտեն անշուշտ թէ երբեմնի ամենէն հայտատեաց ռուս պաշտօնական կամ կիսապաշտօնական օսկաններն անգամ սկսած են լեզուներն փոխել ու տարբեր աչքով մը նայիլ հայ ժողովուրդին ու հայկական հարցին վրայ: Ներիտօֆի արտաքին գործոց նախարար կարգուիլն ալ եթէ հաստատուի, ապացոյց մըն է թէ Ռուսիան կուզէ մօտենալ Անգլիոյ, թէ ի՞նչ կերպարանք պիտի առնէ այս երկու տէրութեանց հայեացքներու կրած

փոփոխութիւնը գործնականի մէջ, անշուշտ ճշտիւ կարելի չէ այժմէն գիտնալ: Զանազան հաւանականութիւններ օր մը կրնան իրականութեան վերածուիլ:

Իրողութիւն է որ երկու տէրութիւններն ալ, և անոնց հետ երրորդ մը, Պրանսան, կը փափաքին այլեւս անկեղծօրէն իրարու մօտենալ: Հեռու չէ այն օրը երբ պիտի իմանանք թէ այդ մերձեցման փափաքը գրաւոր համաձայնութեան մը փոխուած է, ինչպէս Անգլո-Ֆրանսական, համաձայնութիւնը Մարտի, Եգիպտոսի, և այլ խնդիրներու մասին, որոնք երկար ժամանակ այդ երկու դրացի տէրութեանց թշնամութեան նիւթ կը մագաղարարէին, և որոնց կարգադրութիւնը երկուքին համար ալ փոխադարձ հանգստութիւն ու ապահովութիւն մը երաշխաւորեց:

Նոյն տեսակ համաձայնութիւն մը Անգլիոյ և Ռուսիոյ մէջ այլեւս կարելի կերեւայ: Մ. Արեւելքի հարցը շատ երկար ժամանակի մը մը համար Ռուսիոյ առջեւ փակուած ըլլալով, իր և Անգլիոյ մէջ տիրող հակառակութեան քաղաքականապէս ամենէն զօրաւոր շարժառիթը կը մնայ Կոստանթնուպոլիսը, որուն էական կետր, ասիական ցամաքին վրայ, Հայկական Հարցն է:

Ինչպէս տեսանք, Անգլիա անպատեհութիւն մը չի տեսնար այլեւս հայկական գաւառները Ռուսիոյ թեւարկութեան յանձնելու մէջ, և թէ մինչեւ հիմայ հնդկաստանի ճամբան ձեռքէ հանելու վախը զայն կը մղէր ընդդիմանալ Ռուսիոյ, այսօր այդ վախը չունի այլեւս, շնորհիւ Եգիպտոսի վրայ իր տարածած թեւարկութեան և շնորհիւ մանաւանդ Սուէզի ջրանցքին բացման: Միւս կողմէն Ռուսիայէն աւելի զօրաւոր հակառակորդ մը Գերմանիա, օգտուելով հանգամանքէն հետզհետէ կուգայ հաստատուիլ Փոքր Ասիոյ մէջ և աւելի վտանգ սպառնալ իրեն:

Ռուսի աւելի քան երբէք հարմարագոյն ժամանակն է իրեն համար Ռուսիոյ հետ համաձայնութեան մը յանգելու:

Անգլիական արդի դահլիճը մեծ մասամբ այդ ուղղութիւնը ընդգրկած կերեւայ, և երբ Ռուսիոյ ներքին խռովութիւնները հանդարտին, կառավարութիւնը իր վերջնական ձեւն ստանայ ու կարող ըլլայ, ներքին մտահոգութիւններէն զերծ, իր արտաքին քաղաքականութեամբ չբաղիլ, ապահովաբար ամենէն առաջ իր սեղանին առջեւ դրուած պիտի տեսնէ Անգլիոյ հետ համաձայնութեան հրաւերի մը խնդիրը, Արեւելեան խնդրին լուծման համար: Երկու տէրութեանց մէջ մեր ճակատագիրը որչոյզ ու է կարգադրութիւն մը ի՞նչ գոհացում պիտի տայ մեր իղձերուն, ահա խնդիր մը որուն վրայ պէտք է այժմէն անդադառնանք և լաւ մը ձեռքէն մեր մէջ, անակնկալի չի հանդիպելու համար օր մը:

ՇՈՒՐ

ՌՈՒԶՎԷԼԹԻ ՊՍՏԱՍԻԱՆԸ

Ռուս, պետական քարտուղարը (արտաքին գործոց նախարար), հետեւեալ նամակն ուղղած է Ճէյմս Պ. Ռէյնօլտսի, որ նախագահ Ռուզվելթին յանձնած էր Պ. Պերթլօ յայտնի նամակը:

Պարոն,

Նախագահը ինծի յանձնարարած է յայտնել ձեզ ամսոյս 16 թուականաւ ձեր նամակին ընդունելութիւնը, որուն կցուած էր Ֆրանսայի, Իտալիոյ, Պիլիպինայի, Շուէտի, Տանըմարքայի, Սեծն Բրիտանիոյ, Հոլանտայի, Գերմանիոյ և Աւստրիոյ ազդեցիկ ներկայացուցիչներու ստորագրութիւնը կրող խնդրագիր մը, որով կոչ կըլլար նախագահին վերջ մը տալու այն վարչապետութեանց որոնցմէ կը տառապին թուրքիոյ հայ հպատակները:

Ստորագրողներու բարձր դիրքը աւելի մեծ շահեկանութիւն պիտի

տար. եթէ կարելիութիւն ըլլար, այս խնդրին որ բազմաթիւ տարիներէ ի վեր նախագահին ամենալուրջ ուշադրութեան առարկայ եղած է:

Ամերիկացիներու համակրութիւնը ամէն երկրի հարստահարութեան հանդէպ, բիւր առիթներով արտասուած է մեր կառավարութեան զանազան բաժանումներու միջոցաւ, իսկ հայերուն համար այդ արտասուածութիւնը կատարուած է պերճախօսօրէն նոյն իսկ Ամերիկացիներէն: Ոչ ոք կը տարակուսի թէ նախագահը կը բազմապէս որ հայերը իրենց կեանքի ու ինչքի պահպանութիւնը ձեռք բերեն, ապահովութիւնը գործելու պակաս տէրութիւնները համաձայնած են երաշխագրել անոնց:

Թուրքիոյ հայոց տառապանքները բացարձակօրէն դարման կը պահանջեն, Ամբողջ աշխարհի մարդասիրական զգացմանց վիրաւորանք կը պատճառեն անոնց ցաւերը և բոլոր աշխարհ միաձայնօրէն կողորայ ու կը դատապարտէ ցեղային այն հակառակութիւնները, որոնք առիթ եղան իրարու դէմ հանելու թուրք ժողովրդին անհամարաչափ տարրերը: Ուղղամիտ մարդիկ չեն կրնար այդ կը որհրներու հանդիսատես ըլլալ, առանց բաղձալու ու ժիղիքով անոնց առաջըն առնելու համար:

Եւ անկեղծօրէն կը մարտնչուի որ Միացեալ Նահանգները՝ այդ ուժն ունենան. բայց հաւասար անկեղծութեամբ մը համոզուած եմ թէ Մ. Նահանգաց ընելիք ջանքերը, որոնք անհրաժեշտօրէն գուրկ պիտի ըլլան օրինական և ուժեղ միջամտութենէ մը, շատ քիչ բան կամ ոչինչ պիտի կարենան առաջ բերել, և միևնոյն ատեն պարսաւ մը նկատուելով միւս պետութեանց գործերուն ու անոնց զրգապատճառներուն, լաւ տրոջիւնք չի պիտի ունենան այն զժբազդ արարածներուն համար, որոնց լաւութեանը կը ցանկայինք:

Է. ՌՈՒԹ

ՆԱԽԱԳԱՀԸ ԻՆՉ ԿԸՍԷ

Մեր մեծ ազդորդ միջոցները ջուրն ինկան շուտացումէն աւելի արագ: Ասիկա անակնկալ մը չէր մեզի համար և ոչ ալ միջինկէներուն համար: Բայց հայ հասարակութիւնը որ կը սպասէր գոնէ մինչեւ Լահէյի ժողովին գումարներուն բացուիլը յոյսեղով օրօրուիլ: Հիմակու ընէ իր օգային զղեակին խորտակման հանդիսատես կը ըլլայ:

Արդէն ուրիշ կերպ չէր կրնար ըլլար: Ինչու ըրինք այդ միջինկէները. ինչ շարժառիթ, ինչ ստիպողականութիւն կար: Եւրոպացի հայաստանցիները զիմած էին նամակով Ռուզվելթի Ռուզվելթ ալ այդ նամակը հրատարակութեան տուած էր: Հայերս ուժ տալ խորհրդանք մեր միջինկէներու հետագիւրդներով՝ Եւրոպացիներու այդ զիմածին, այն մտածումով որ Ռուզվելթի այդ քայլը կը նշանակէ թէ նախագահը տրամադիր է հայերու ի նպաստ գործելու: Բայց պարագայ մը կար որ պէտք էր ուշադրութեան առնելինք:

Ռուզվելթ այդ նամակը հրատարակութեան տուած ատեն երբէք հայերուն նպաստաւոր բան մը ընելու որոշումէն չէ որ առաջնորդուած է. Գանի մը հարիւր ականաւոր ու

հուշակուած անուններ Եւրոպայի բոլոր մեծ ազգութիւններէն, իրեն կը դիմէին միջազգային քաղաքական խնդրի մը համար. Ռուզվելթը չէր կրնար իրեն զիմող մեծ անուններու այդքան հոյակապ շարքը անկատար թողուլ, նոյն իսկ եթէ զիմուր գընչուներու համար եղած ըլլար, առանց ատով իր վայելած տիեզերական համակրութենէն մեծ մաս մը կորսնցնելու: Ուստի նամակը հրատարակեց, այդ կերպով զոհացում մը տուած ըլլալու համար, իրեն գիտեց եւրոպացիներուն, Ատոր մէջ իրար անցնելու պատճառ մը չի կար մեզի համար, և պէտք էր որ մեծ քանակներ հենարան տեղերին: Եւրոպայի իր մարդասիրական բաժինը կը կատարէր, մինք ալ մեր բուն գործին զբաղէինք, ու չը ստիպէինք որ Ամերիկան իր վերջնական բաժնէ ընէ: Ամերիկան իր վերջին բաժնէ բաւ: «Եւրոպայի մէջ Վարդօ գրած էր Ռուզվելթի յայտարարութիւնը Հայկական հարցը Լահէյի ներկայացնելու մասին: Ուրիշ թերթեր բնագործակօրէն թարգմանած էին նախագահին քարտուղարին պատճառական նամակը Ռէյնօլդսի ուղղուած: Ուրիշ նամակ մը ալ արտաքին գործոց նախարարը ուղղած է Ռէյնօլդսին, Ատոնց ամբողջ իմաստը այն է թէ՛ Ամերիկա սրտանց կը ցաւի հայերուն վիճակին, բայց ինք բան չի կրնար ընել, որովհետեւ Պէրլինը դաշնագիրը ստորագրող պետութեանց շարքին մէջ չի գտնուիր, հետեւաբար ինք իրաւունք չունի հայկական հարցը Լահէյի սեղանին վրայ դնելու: Բայց եթէ այդ դաշնագիրը ստորագրող տէրութիւններէն մին յանձն առնէ այդ առաջարկն ընել, ինք, բնական է, ուժ կուտայ անոր:

Ահա պատասխան մը, որ գրեթէ լսեցինք բոլոր հայասէր պաշտօնական գահիճներէն, Ամէնքն ալ կը ցաւին, բայց բան մը չեն կրնար ընել, եւ խնդրել վրանուն կը նետեն ուրիշին վրայ:

Միւս կողմէ Սուլթանը հրճուանքի մէջ է անուշտ, Ռուզվելթի առաջին քայլէն գուցէ սիրտը դող ելաւ, կը վախնար որ Ամերիկայի նախագահը այս անգամ կը համարձակի թերեւս խնդրել ձեռք առնել լրջօրէն Լահէյի առջեւ. բայց հիմայ հանգիստ է, Այդ կողմէն վախ չունի թէ Պէրլինի դաշնագիրը ստորագրող պետութիւնները յանձն պիտի առնեն այդ բանը, Միջին Եւրոպայի անոնց բռնած ընթացքը շատ յոյս չի ներշնչեր:

Պիտի ըսէք թէ ինչ կորսնցուցինք միջինկէներէն: Ոչինչ. կամ միայն հազար ֆրանքի հետագիւրդներու դրամ: Դժբաղդաբար միայն նիւթականք չէ կորուստը: Բարոյապէս կորուստ ունինք, նախ որ մեր միջինկէներու արժէքը շատ ատճանցուցինք, ու պրոպիկ միացինք անոնց պարագայ ելլելովը: Երբ արդէ մը գիտում կրնէ, պէտք չէ նո, պատանայ, ու ճիշտ այդ պատճառով պէտք է սուղ ծախէ ինքզինքը: Ասկէ զատ կարգ մը միջինկէներու առիթէն օգտուելով շահագործեցին հասարակութիւնը Պոլկարիոյ մէջ: Անոնք ալ միջինկէներու զօր տուին, իրենց էջը քշելու համար:

Ե.

ՆԱԽԱԳԱՏՈՒՓ

Կարա Սլիվէն.— Պ. Սարգիս Վարդանեան, Ձեր Գոյց տուած հասցէին ուղարկուած բոլոր

թերթերը փօսաէն ետ վերագրածուած են, թերթերը դարբացուած ենք մինչեւ Ձեր կա. նոնաւոր հասցէ աւար:

Մեր ՉԸ ՎՃՍՐՈՂ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ կամ վճարեն իրենց պարտքերը և կամ դադարին թերթ ստանալէ:

ՄԱՍՈՒԼԻՆ ԶՈՒՐԶԸ

«Ոգաս Բեմ»-ի «Ներկու խօսք»-էն.

«Դաշնակցական ազնիւ ու գիտակից ընկերները պէտք է ըմբռնեն որ իրենց կարգ մը վարչներուն վաւաստակարութիւնը դարձանելու միջոցը՝ յեղափոխական ապստամբութեան քայլեր չէ, (ակնարկած է Մեյիթօֆի հետ սցանան Ծ. Ո.) այլ վաւաստակար տարբերուն մաքրագործում է: Արդէն մարմնոյ մը մէկ մասը երբ նիւթի կըսկսի, միւս մասերուն պահանջն է որ անգահաստելով բաժնուի նիւթած մաքր. ապա թէ ոչ, ամբողջ մարմինը կը վարագործի ու կը փախի: Ուստի իր բնական յեղափոխական գործին հզօրացման նախաձեռնողները, մենք կը փափագինք որ դաշնակցական ճշմարիտ հայրենասէրները փոխանակ իրենք հետաճախու անպարէզէն, հետաճնեն վատերը, զեղծարարները, որոնք արդէն առիթ կը փնտռեն մաքուր գործիչներէն փրկուելու: Հայ ժողովուրդը տակաւին շատ պէտք ունի իր ազնիւ զաւակաց ճիգերուն»:

Արաքսի—Ամերիկա ի՞նչ կրնայ ընել»

«Նախագահ Ռուզվելթի մատուցած խնդրագրէն ի վեր սենյոտ շարժումներ կը ըլլան արտասահմանի հայ գաղութներուն մէջ. Բոլոր նշանաւոր ու աննշան գիտնականները գործի վրայ են, Դարձեալ հայկական ցուցամուտները կը ցուցադրուի իր վրան բաց բոլոր ապարդիւն ճիգերով:

«Քանի որ անտէր ազգ ենք, ամէն մի անհատ իրաւունք կը համարի իրեն ազգին տէրը ըլլալու: Մէկ կը ժողով կը սարքէ եւ խնդրագրեր կը սուրան վաշինկիօն, ուրիշ մը Հայաստանի ազատարարն ըլլալու անպարտաճօք՝ իր գիշերային մտքին ցնորքները Ռուզվելթի կանանչ սեղանին վրայ բազմեցնելու կեցիլ, եւ զեռ ո՞վ գիտէ ռեբի ինչ գիտնագիտական խնդր ձեռնարկներ:

«Իսկ հետեւանքը, Հետեւանքն ո՞վ կը հարցնէ. չէ՞ որ մարդ իր պարտականութիւնը պիտի կատարէ. եթէ արդիւնք մը առաջ չի գալ, անոր ալ ինք պատասխանատու չէ: Եւ ո՞վ է արդէն պատասխանատու փնտռողը: Ու բարեկրնական այս անկարգապահ թաքթիքը որ փորձուցաւ ուրիշ հողի մը վրայ, կը կրկնուի այժմ արտասահմանի մեր գիտնագիտական ձեռնարկներու մէջ»:

«Ուստի»-ի «Հայաստանէն»

«Չմշկածակէն հասած լուրերուն նայելով, տեղական իշխանութիւնը այս վերջերս շատ խստացուած է իր բռնութիւնները, Պոլսոյ եւ Իզմիրի զէպերը այնքան ազդած են թուրքերուն՝ որ պատճառ կը փնտռեն

միշտ հայ ժողովուրդը ջարդելու եւ կողոպտելու: Այն հայերը որ բարոյաւորութեամբ վճարելու դրամ չունին, կը զրկուին իրենց պարտէզներէն ու արտերէն: Կառավարութիւնը աննշան գնով մը կը ձախէ գանձը ու դրամները կը գանձէ: Եւ նոր սուրբերը միշտ կանխան: Հայոց տնտեսական տազնապը երթալով կը ձանձրանայ: Մէկ կողմէն արտերը կը խլուին, որով երկրագործութիւնը անկարելի կը դառնայ, Միւս կողմէն ալ կարգիւրի օտար քաղաքներ ու երկիրներ պանդխտելով, որով Չմշկածակէն իր պարտաւոր զխաւոր մէկ աղբիւրէն կը զրկուի: Արդէն, տեղին առուտուրը բոլորովին թերթերու ձեռքն անցած է»:

«Բիւր Արմէի»-ի «Իստաճեակ»-էն

«Երբուկեան, Պասալի քրիստոնեայ երեւելիներէն մին եւ անդամ գաւառին վարչակ խորհուրդին, սպաննուած է արապներու ձեռքով Պասալի հրապարակին վրայ:

«Հիզուէլ Էֆրատ գաւառին մոլեոսանց իսլամները քրիստոնեայ բնակչութեան ինչքերը կը կողոպտեն ու կը հրգեցնեն. նոյնպէս կիներու եւ տղոց վրայ կը յայձակին եւ կը ստիպեն բնակիչները որ իսլամութիւն ընդունին»:

«Ք. Էօրօրէն»-ի «Ռուսիան»-էն

«Հակահրեակական յայտարարութիւններ կը ցուրուին ժամանակէ մը ի վեր Բեթերսպուրի մէջ, Այսպէս կըսկսին անոնք:

«Երբայրներ, գործաւորներ ու զիւղացիներ, գիտէք թէ որոնք են մեր այս բոլոր դժբախտութեանց հեղինակները: Ամբողջ աշխարհի հրէաները, Ռուսիոյ երդուեալ թշնամիները Հայերը, Կերմանիան եւ Անգլիան, որոնք դաշնակցութիւն մը կազմած են եւ որոշած են ամբողջովին քարուքանդ ընել Ռուսիան, զայն փոքրիկ թագաւորութիւններու բաժնելու եւ ոռուս ժողովուրդին թշնամիներուն տալ: Այս նպատակով էր որ ձաբոնիան մեր դէմ հանցին, եւ պատերազմի ատեն միշտ մեզի մատնեցին անոր, ինչ որ մեր յաղթուելուն պատճառն էր»:

Իսկ քիչ մը հետուն.

«Եթէ այս անվճարներէ մին ձեռքով գայ, բզկտեցէք զայն, սատկեցուցէք: Այս պահուս իսկ պատուաւոր ուսուր որոնք իրենց հայրենիքը կը սիրեն, մեր վեհապետին գիտում ըրած են որպէս զի իր նախագահական ամբողջ փոխառուութեան ժողովուրդին ամենամեծ թշնամին որ միանգամայն հրէաներուն ամենազխաւոր բարեկամն է»:

Կոչը իր առաջին էջին վրայ հետեւեալ շանակալից յիշատակութիւնները կը կրէ:

«Տպուեցաւ Բեթերսպուրիի ոստիկանական տեսչութեան տպարանին մէջ. թոյլտուութեամբ գրաքննութեան»:

ԼՈՒՐԵՐ Կ' ԼԻԿԻԱՅԵՆ


«Ազատ Բեմ» հետեւեալ լուրերը կը ստանայ Չմշկուէն.

«Հալէպէն Աղբքանդրիս հասած նամակէ մը ցաւով կիմանանք թէ

Ձէյթունի անուանի գէջերէն նա զարեթ Չալուշ (եկնիտիւնեա) ուրիշ եօթը Ձէյթունցիներու հետ ձերբակալուեր ու Հալէպ բերուելով բանտարկուեր է. յիշեալ եօթն ընկերներուն մէջ կը գտնուին նաեւ Մէրկէնեան ծանօթ ընտանիքէն անդամներ :

Ձէյթունցի Չազըրեան գերդաստանը բազում նեղութիւններէ եւ զօնարութիւններէ վերջ կը յաջողի կաշառել տեղական կտաւալարութիւնը եւ բանտէ գերծ մնալ առ այժմ :

Մարաշէն եւս երկու հարուստ հայեր Պիլէզիքեան եւ Հազարապետեան Հալպի կեդրոնական բանտը տարուած են : Աւելորդ է ըսել թէ քոյր այս անմեղ հայերը դեռ ուրիշ շատերու հետ որոնց անունը անծանօթ կը մնայ կը բանտարկուին, կը հարստահարուին, միմիայն հայ ըլլալուն համար Տեղական թուրք պաշտօնատարի մը յայտարարութիւնը այս մասին գազափար մը կուտայ արդէն : Այդ պաշտօնատարն է վէլի էֆէնտիին տղան կոչուած Ահմէտ աղան : Մարաշցի, եւ պաշտօնով Ձէյթունի մալ միւս իրիւրիւ այս սիրահոշակ հարստահարիչը սա համոզումն ունի եղբոր թէ Ձէյթունցիները հանդարտ պահելու համար պէտք է անէն ժամանակ բանտարկել նեղել զանոնք : Ասիկա արդէն թուրքիոյ կեդրոնական կառավարութեան արգազականութիւնն ըլլալով յիշեալ Ահմէտ աղան սանձարձակ ու անպատասխանատու կերպով կը գործէ : Կիլիկիցիներ կը վկայեն թէ տարու տարիներ առաջ ալ նոյն այս Ահմէտ աղան էր որ նմանօրինակ յայտարարութեամբ մը անտանելի փորձանքներ կը բերէր Ձէյթունցեաց զխուռն :



ԱՊՊԷ ԺԻԼ

ՄՍՍ Բ

(Հատուածներ)

(Շար. 788 թիւէն)

Ժամակոչը կարճուկ մարդ մըն էր, գունատ, կլորիկ, երկար յարց մազերով որոնք քանկերուն փակած էին, մարդասէր ու սմանդակ դէմքով՝ գորկունեան գրեթէ միշտ վանքերու աշխատաւոր եղբայրները : Արհեստով անուշալմաճառ էր, քաղաքին աղբերուն, «օքթրուա»ին և եկեղեցւոյն աթոռներուն աճուրդէ գնողը Հանգիսաւոր պարագաներու մէջ, աւագերեցին սեղանին կը սպասուորէր : Ժշդուպահ, բանբարակ, բժանդիր, ծանօթ արարողութեանց բոլոր ձևեր, թուն, այդ մարդը նշանաւոր ժամկոչ մըն էր : այնքան նշանաւոր որ գրեթէ առաջնորդական փոխանորդի մը չափ կը պատուէին զինքը : Եստ կամաց կը խօսէր ցած ձայնով, միշտ ընտրուած ու բարեհաս բառերով : Արդէն իր արեւիք պատրաստած էր ու կարմիր լապտերս վառած՝ գոր ես պիտի կրէի :

— Հազարութեան համար զենջակ մը գրի տուիք մէջ : Ըսաւ ժամկոչը, գուցէ այդ մարդիկը չունեն յարմար բան մը :

— Ի՛նչ կուզես դիր, միայն թէ ածապարէ, ըսաւ հորեղբայրս :

Ու մինչդեռ ժամկոչին օգնութեամբ չապիկն ու փորուարը կը

ՏԵՂԱԿԱԼ ՇՄԻՏԻ ԵՎ ԻՐ ՆԱԻԱՍՏԻ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ ԳԼԽԱՏՈՒՄԸ

Շմիտի սպանման մասին Բեթերս պուրկէն հետեւեալը կ'իմացնեն . —

Մարտ ամսոյ 5ին յուսարացին ժողովակալ Շմիտը, Չասդնիք, Կլասքով եւ Անտոնէզո նաւաստիներու հետ միասին, Օչաքովէն 21 վերստի չափ հեռու Պէրէզէն անուն կղզի մը տարին ու հրացանի բռնեցին : Նոյն ամսոյ 5ին Թէրէզ անուն սուզանաւոր Սէվաստաբոլէն հասաւ, ու բերաւ դատավճիռը ծովակալ Չուհինէ հաստատուած և կէս օրէն վերջ գրեթէ ժամը 3ին, մահու դատավճիռը Շմիտին իմացուցին : Նա սրտի կտտարեալ հանդարտութեամբ զայն մտիկ րբաւ, սակայն գունաթափ և նաւաստիները ըսին թէ՛ արդէն ասկէ ուրիշ բան մը չէր սպասուէր Չուհինէն :

Բրուտ անուն բեռնակիր շոգենաւոր, ուր կը գտնուէր Շմիտ իր նաւաստիներով, բերաւ Շմիտի պաշտպանը Վինգէրկ, անոր ամենամահեղձ բարեկամը, որ Օչաքովի մէջ բողոք իր ժամանակը անոր հետ միասին սեցուց : Նա Բրուտը շոգենաւորին մէջ 4 ժամ մնաց : Շմիտ դառնապէս կույար նաւաստիներու քայտին համար, որովհետեւ կը կարծէր թէ՛ անոնց ներում կը շնորհուր անպատճառ :

«Անոնք երիտասարդ են, անձնուէր, ես կուզեմ միակ մեռնիլ, այսպէս ինձ համար աւելի հեշտ էր, անոնք անմեղ են» կը կրկնէր Շմիտ լալագին :

«Միակ մտածումը որ զիս կը տանջէ այն է թէ՛ ընդհանրութիւնը կը հաւատայ ամբաստանութեան, որպէս թէ ես հրամայած ըլլամ յաժմ

նաէն Օչաքովը զարնել : Այս աղտոտ ամբաստանութեան տակ ես չեմ կրնար մեռնիլ, կանչեց նա : Ես մարդ մը իսկ սպաննած չեմ, պատմեցէք այս ամենուն :

Իր վերջին վայրկեաններու մէջ Շմիտ իր որդւոյն եւ քրոջը երկար նամակներ գրեց :

Կէս գիշերէն վերջ ժամը 2-3ին նաւաստիներու հետ միասին տարին զայն ուրիշ շոգենաւ մը, ժամը 3ի մօտ Պէրէզէն կղզին հասաւ :

Փիշերուան պահուն 13 սպաներու հրամանատարութեան տակ քանի մը ջոկատ զօրք հասած էր կղզին ու կը սպասէին. Հոս էին նմանապէս «Բրուտ»ի հրամանատարը և սպաները, ոստիկանապետ մը, քահանայ մը եւ 4 նոտ պատրաստի դափաղ : Դատավճիռը իրագործելու համար «Թէրէզ» սուզանաւէն 60 նաւաստիներ բերած էր, ասոնք շարուած էին 50 քայլի չափ հեռու այն վայրէն, որ կապուելու էին դատապարտեալները. նաւաստիներու ետին երեք կարգ հետեւակաջօր շարուած էր Շմիտ արագաքայլ զիմեց այն վայրը ուր մեռնելու էր եւ հետեւեալ խօսքերը ուղղեց զինուորներուն .

«Մի՛ սոսնաք բնաւ տեղակալ Շըմիտը, սր կը մեռնի Ռոսս ազգին սր բանուէր հայրենիքի, Ձեզի բնաւ անհրաժեշտ բայրնեցուն համար. ինձ նման մարդիկ տակաւին շատ ու շատ կան» : Նա ցրկախառնուեց «Բրուտ»ի հրամանատարին հետ. բարեւեց սպաները եւ խնդրեց որ ոչ զինքը եւ ոչ աչքերը կապեն :

Չասդնիքը գոչեց. «Ուսք բարով ընկերներ 4 էյ, հիմայ պիտի գայ մահը, ներեցէք» — միացեալները կուլային :

գործի մը վրայ եղողի հպարտութիւնն ունէի. Երբ գիւղէն դուրս ելանք, հօրեղբայրս կանգ առաւ, շունջ չէր կրնար առնել :

— Կը խեղդուի՛մ կոր ըսաւ ինձի, արիւն քրտինք մտար. իսկ սա, սա, որ սոսկալի նեղութիւն կը պատճառէ կոր ինձի... Ա՛ռ սա :

Ու ինձի երկնցուց սրբատուփը, անոր ծածկոցովը երեսի քրտինքները սրբեց, ու քանի մը վայրկեան լաւ մը շնջեց, Յետոյ սկսանք քայլել :

Մութ գիշեր էր, լոկի, միայն մեր քայլերուն աղմուկով ընդմիջուած ու նաեւ հօրեղբորս կուրծքէն ելող խոպոտ շնջումէն ժամկոչը իր գործիքը կը շարժէր միայն երբ հեռուէն մարդու մը կամ սայլի մը ձայնը լըսէր. Ու կը քայլէիք ցած ու մոայլ երկիւղեղ տակ գոր կապարէ ամպեր շրջապատել սկսած էին : Ու կը քայլէիք գիւսային խնձորենիներու բազմաճիւղ ու գալարուն ստուերներուն մէջէն Յաճախ ճամբան հողակոյտերուն վրայ մեր առջեւ կը ցցուէր, կաղնիի բուններու սարսափարկու սիլուէթներ, կարծ, բազմաճիւղ, որոնք թախծալի գիշերուան մէջ, պզտիկ հրէշներու փախուստ մը կը ձեւացնէին կարծես, անէութեան ծոցէն ժայթքող խոշոր կուղ լավաներու խուճապին նման : Ես կը վախնայի, ու նոյն իսկ ժամկոչը հանդիսաւորութեամբ մը կը հազար, որպէսզի քիչ մը սիրտ առնէր :

Ծաւէն սպառած՝ հօրեղբայրս ստիպուեցաւ կրկին կանգ առնել, Մունգերը կը գողային ու կը մերժէին

նոստովանահայրը ետ քաշուեցաւ :

Առանց գլխին ծածկոց ունենալու, Շմիտ զուլեւը քարձը բռնած կը կենար, անոր աչքերը կապուած չէին. Երբ թմբուկները զարկին եւ նաւաստիները նշան առին Շմիտ գոչեց «Երեւաք բարով» ու գոցեց աչքերը. — «Կըրակ» գոչեց հրամանատարը, ու դատապարտուածներէն երկուքը գետին տապալեցան. Երկրորդ միարձակ հրացանաձգութեանէն ետքը ինկաւ երկրորդ նաւաստին միայն Շմիտ կը մընար անմեղ : Աչքերը չորս կողմ կը դառնային. Չորրորդ հրացանաձգութեանէն ետքը նա ալ ինկաւ գետին. քանի մը գնդակներու հարուածի տակ, ժամը 4 ու կէսն էր, այն ժամանակ ահալիբայ զինուորները փորեցին գերեզմանները, անոնց տաք տաք դիակները դրին պատրաստուած դագաղներուն մէջ ու թաղեցին :

Թարգմ. Մ.

ՄԱՔՍՍՅԻՆ ՆՈՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ

(Շար. Ասիս. թիւէն)

Յօդ. 64. — Մաքսային յանձնակատարները իրենց աշխատութեան փոխարէն վարձատրութեան իրաւունք կը ստանան կամ իրենց յաճախողներու հետ ունեցած մտնաւոր պայմաններու եւ կամ առեարկան սենեակներուն մշակած թարիֆներուն համեմատ, որոնք վաւերացած են ելեւմտից նախարարութեան :

Մաքսային յանձնակատարներու միւս իրաւունքները, պարտականութիւններն ու պատասխանատուութիւնները նոյն նախարարութեան մասնաւոր կանոնագրով որոշուած են :

անոր-մարմինը կրելու, ուստի քարի մը վրայ նստաւ, զուլեւը ձեռքերուն մէջ առած : Ու քստմեցուցիչ էր տեսնել, այս մոայլ գիշերով, անոր հեծկտալը, հեալը, կեանք զլլելը փըշող հովէն :

— Տար վայրկեան մնաց, արբահայր, սիրտ տուաւ ժամկոչը, Հեռուէն տեսնուիլ սկսան գիւղին լոյսերը :

— Տար վայրկեան չի պիտի կըրնամ, կը խեղդուի՛մ կոր, պիտի մեռնի՛մ...

Ոտքի ելլել ուզեց, բայց վար ինկաւ, սրբատուփը գետին թաւալեցաւ ու փոսը ինկաւ :

— Սուրբ Աստուածածի՛ն, աղաղակեց ժամկոչը, Տէրն մեր Յիսուսի մարմինը փոսը ինկաւ... Տէր Աստուածը կորսնցուցինք :

— Ժողովէ ինչ կեցեր ես, պոռաց հօրեղբայրս բարկութեամբ :

Ժամկոչը զարհուրած մնաց :

— Ե՛ս, արբահայր, ես... Ս. Աստուծո՛յ դպիլի իմ պիղծ ձեռքերովս, երբ հոգիս ամբողջովին մեղքերով լեցուած է... Ո՛չ, ո՛չ, երբէ՛ք... Եանթահար ըլլամ միթէ :

— Աւանակ, քֆրեց արբան... Եկուր, ծօ՛ պզտիկ :

(Շարունակելի)

հագնէր.

- Գահանան ո՛ւր է հարցուց
— Գահանան ժողովի գացեր է
— Իսկ փոխանորդը :

— Իմացայ որ փոխանորդ հայրը այսօր քոյրը պիտի ամուսնացնէ : Հօրեղբայրս երկար բարակ սեղանին առջեւ չեքերակայ կարելի եղածին չափ կրճատեց աղօթքները ու երկրպագութիւնները, յետոյ ծածկերով սրբատուփը իր ոսկեգօծ ծածկոյթով վար իջաւ ու մեկնեցանք :

Ժամկոչը առջեւէն կը քայլէր. մէկ ձեռքով ս. միւսողին տուփը բռնած, իսկ միւսով պղնձէ անօթը, ետեւէն ես կերթայի լապտերս բռնած, ու հօրեղբայրս ամենէն ետքը կուզար, շնչապատ, շարժարուելով, նեղուելով սրբատուփէն՝ գոր մէյ մը վեր կը վերցնէր, մէյ մը վար, անգամ ալ կը տանէր. յետոյ ձախ որպէսզի լաւ շնջելու յարմար գիշերք մը գտնէ :

— Կամաց քիչ մը, պոռաց, երբ ծառուղին հասանք :

Իւրաքանչիւր քսան քայլի ժամկոչը ձեռքի պղնձէ գործիքը կը շարժէր. որ տըռուլէ՛ն, տըռուլէ՛ն ձայն մը կը հանէր : Մարդիկ դուռը կ'ելլէին, պատուհաններէն կը կախուէին, զլխարկներն կը հանէին, ու կը խաչակնքէին : Փողոցին մէջ, կիները ծուռքի կուզային, ճակատներն խոնարհած, ձեռքերն իրար միացուցած, Այսպէս հետզհետէ փոքրիկ թափօր մը կազմուեցաւ մեր ետին, որ հետզհետէ կը մեծնար Ու գործիքը միշտ կը հնչէր «տըռուլէ՛ն, տըռուլէ՛ն» իւրաքանչիւր քսան քայլի : Ես մեծ

Յօդ. 91.— Մաքսատուները պատասխանատու չեն իրենց մօտ գրանուած ապրանքներուն հասած վնասներուն եթէ կամ քէ անկախ պատճառներով եղած ըլլան, ինչպէս հրդեհ, ողորում և այլն.

Յօդ. 106.— Վնասուած նաւերէ, ինչպէս նաեւ Դանուբէն պուլկարական հողին վրայ հանուած ապրանքները, եթէ երկրին մէջ մնան ընդհանուր օրէնքին համեմատ մաքսային իրաւունքներու վճարման կենթարկուին .

Յօդ. 109.— Մաքսային միտերանցներու մէջ ձգուած ապրանքներու համար իւրաքանչիւր 100 քիլօին կաանոր կոտորակին, օրական 10 սանտիմ մակադին աս է կը գանձուի .

Յօդ. 111.— Մակադին աս թ տուրքէն գերծ են.

ա) այն ապրանքները որոնք մաքսատուներ կը մնան հակառակ ապրանքին տիրոջ կամքին.

բ) փութով զրկուածները .

գ) այն ապրանքները որոնք մաքսը կը պահուին քիմիական անալիզի համար, եթէ քիմիական աշխատանքը թոյլատրէ անոնց մուտքը . բայց մակադին աս իրաւունքը կը գանձուի տէքլարածի տրուելէն առաջ, ինչպէս նաեւ աշխատանքին որոշման հաղորդուելէն յետոյ եղող օրերուն համար .

դ) այն ապրանքները որոնք վար կը գրուին մաքսային իշխանութեանց եւ վաճառականներու միջեւ ապրանքներու տեսակին, որակին եւ որոշուած մաքսին քանակութեան համար ծագած վէճերու հետեւանքով, մինչեւ վէճին վերջնապէս կարգադրուիլը .

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պօլսոյ քաղաքացիներ Ռոստփան փաշայի տեղ, նշանակուած է, Պուրսայի կուսակալ Ռաշիտ բաշան . Ասկէ 2 տարի առաջ, Միացեալ Նահանգներու գործակաւտարի պնդումի վրայ, Ռաշիտ բաշան Պէյրութի կուսակալութեան պաշտօնէ հեռացուելով, որպէս շնորհագորակ Պուրսայի կուսակալ անուանուած էր . Միացեալ Նահանգներու գործակաւտարութիւնը, զանի կամբաստանէր որպէս կազմակերպող հակաքրիստոնէական շարժումի, և այս իսկ պատճառով զանի հեռացուցին իր պաշտօնէն, իսկ երբ Պուրսա գնաց նա հոն ունէ ատելութիւն չը ցուցադրեց օտարականներու դէմ, ընդհակառակը պատուաւոր ու անկողմնակալ մատակարարի մը բոլոր բարեմասնութիւններով փայլեցաւ . Ռաշիտ բաշայի, Պօլսոյ քաղաքացիներ անուանումը, քաղաքական շրջանակներու մէջ լաւ ազդեցութիւն ներգործած է .

Ռոստփան բաշան սպաննողները ձերբակալուած են .

— Ելեմտական վերաքննիչ յանձնարարի կողմանէ պատարաստուած Մակեդոնական պիւտեճէն, Բ. Դուռը դեռ և հաստատած չէ .

— Պօլսոյ պարսիկ դեսպանը, Անգլիական կառավարութեան դեսպան Սըր Օ'Գոնսրի յայտարարած է թէ՛ թրքական զինուորներու դեռ պարսիկ երկրի մէջ մնալը շատ ծանր հետեւանքներ կրնայ ունենալ . Անգլիական դեսպանը, հակառակ քանի մը հեռագիրներու հաղորդած լուրին, հիմնուելով էրզրումեան գաշնագրի վրայ, Անգլիոյ կողմանէ ստորագրուած Ռուսիոյ հետ միասին, ոյժ կուտայ պարսիկ կառավարութեան իրաւացի պահանջին .

Բ Դուռը կը պնդէ թէ նոր վաւերագրեր ունի, որով թրքապարսկական վիճելի հողաբաժնի վրայ, ինչպէս նաեւ էաթիճանի ամենամեծ բաժնի վրայ, Ռուրքիոյ ունեցած իրաւասութիւնը դրականապէս կը հաստատուի . Թուրք կառավարութիւնը բուն կերպով չի դիմադրէ ու չուզեր պարսիկ կառավարութեան գոհացում առկա քաջելով իր զինուորները վիճելի հողաբաժնէն . Ասկէ զատ, իր ուզածը օրինաւորելու նպատակով, Բ. Դուռը պարսիկ դեսպանութեան իմացուցած է թէ՛ Եաթիճան նահանգի մէջ գտնուող Զուղէվէլ, անուն վայրը թրքա պարսկական մաքսային սահման կը նշանակէ . Պարսիկ կառավարութիւնը Թուրքիոյ այս տնօրէնութիւնը թշնամական գործառնութեանց դրդապատճառ կը նկատէ .

— Թրքա Եպիպտական միջադէպի մասին Անգլիոյ արտաքին գործոց նախարար Սըր Կրէյը, այս մասին հետեւեալ կերպով պատասխանած է երեսփոխան Լաուսընի, Ահապան կը գտնուի թրքական երկրի վրայ, այս մասին ունէ հարց մը գոյութիւն չունի, իսկ Ռինաեա թերակղզիին մէջ գտնուող Թապա քաղաքը, քանի մը սերունդներէ իվեր Եպիպտական կառավարութեան սեփականութիւնը կը համարուի . Ահա Սինաեա թերակղզիին մէջ գտնուող այս քաղաքը և ուրիշ երկու վայրեր թուրք զինուորները գրաւած են . Այս արարքը Եպիպտական կառավարութեան իրաւունքները ոտնակոխ կընէ, իսկ այս միջադէպէ յառաջ եկած կացութիւնը երկար ժամանակ հանգուրժելի չէ, շարքը տակաւին բանակցութեանց առարկայ է .

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Բէվէլ քաղաքէն կիմացնեն թէ, հոն 12 դիւզացի մահուտողատարտուած են խռովութեանց ժամանակ այս դատապարտեալներէն երեքը ագարակայետ մը սպաննած են, իսկ մնացածները այրած են կալուածներ .

— Սեփաստարլի կառավարիչը հրաման մը արձակած է, որով հրէաներուն կառավարիչէ 48 ժամուան մէջ հեռանալ քաղաքէն ու արուարձաններէն . Մեծ վախկայ թէ՛ Զատկական տօներու ժամանակ հրէաներու ջարդ մը տեղի ունենայ .

— Ամսոյս 15ին վաբշափ մէջ Տուճի համար ընտրութիւններ տեղի ունեցան . Արհեստանոցներու գործաւորները չը մասնակցեցան և ուզեցին ընտրութիւններուն արգելք հանդիսանալ, սակայն, զինուորականութիւնը միջամտելով կարգը վերահաստատեց .

— Բեթերսպուրկէն կը հաղորդեն թէ՛ վերջին ժամանակներս բառին բովանդակ առումով հասարակական կեանքը անապահովութեան մատնուած է . Այլազան անձինք շարունակ կը յարձակին բնակարաններու վրայ .— փոյոցներու մէջ ոստիկաններու թիւը բազմապատկուած է .

— Ռուսական կառավարութիւնը 170 հազար ռուպլի վարկ մը բացած է նոր զրահաւորներ շինել տալու համար . Գրիէսգէի նաւարանին մեծ յանձնարարութիւն մը փոխանցուած է .

— Բեթերսպուրկէն կիմացնեն թէ՛ Կոստտարագվէնա Տուճի համար մինչեւ հիմայեղած ընտրութիւնները կառավարութեան համար աննպաստ են . Ռամկավարականներու և սահմանադրականներու կուսակցութեանց ընտրելիներու դէմ կառավարութեան գործադրած ճնշման հակառակ, դարձեալ անոնք ընտրուած են .

— Կարոն քահանան յայտարարած է թէ՛ նա վիթէի համաձայնութեամբ Բեթերսպուրկ գացած է .

ՐՈՒՄԱՆԻԱ

Ռուսմանիոյ մէջ ֆրանսական լեզուն կը թուրիւնը այժմիկ որպէս ազգային վտանգ մը կը նկատուի . Աղնուատոհմ ընտանիքներու մէջ ընդհանուր առմամբ ֆրանսերէն կը խօսին, կը գրեն ու կը կարդան նաև . Ասկէ օրեր առաջ աղնուականները կառավարկեն Ազգային թատրոնին մէջ ֆրանսերէն լեզուաւ «Պուրժուա ֆրանսէ» անուն թատերգութիւնը ներկայացնել . Ռուսները ցոյց մը կը սարքեն ու այս երկին չը ներկայացուիլը կը պնդեն . Թատրոնին շուրջը զրտնուող բոլոր փողոցները պինտորականութիւնը կը պաշարէ . Օուպարները թատրոնին մօտակայքը գտնուող բոլոր բնակարաններու ապակիները կը փշրեն . Զինուորականութիւնը ցուցարարներ կը ցրուէ . Ժողովուրդը չը թոյլատրեր որ թատերախաղը ներկայացուի . Ռուսները

պարագլուխն է ուսուցչապետ Ն. Յորկա .

ՍԵՐՊԻԱ

Սերպ կառավարութիւնը, Մակեդոնական գաղանի ընկերութիւնը ցրուելով, ձերբակալած է ընկերութեան պատկանող քանի մը անդամները, որոնք յանուն ընկերութեան շահատակութիւններ կը գործէին, և վերջերս ի գործ դրած սպաննութիւններով սարսուփ ազդած էին ժողովուրդին վրայ .

— «Տոմար» լրագիրը կը հաղորդէ թէ՛ թագաւորի նախագահութեամբ քաջի ունեցած է նախարարական երկարատեւ ժողով մը, ուր քննած են անգլիական կառավարութեան առաջարած պահանջները յիանադիտական յարաբերութիւնները վերանորոգելու համար երկու կառավարութիւններու միջև . Ի մէջ այոց Անգլիան պահանջ կը դնէ նաև արտաքսուումը 11 բանակէն դաւադրողներու և նոյնպէս ունէ կառավարական պաշտօնէութեանէ . Կրուիչ Բէշիչ, Բափիչէվիչ նախարարները մերժած են այս պայմաններ, իսկ մնացեալները ընդունելով բանակցութեանց շարունակումը պնդած . Այս խնդրի մասին վերջնական որոշում մը տրուած չէ տակաւին .

ՉԵՐՆԱ-ԿՕՐԱ

«Պուրգապուգ» լրագիրը կը պնդէ թէ՛ Չէրնակօրայի իշխանը հիմայ Եճէի . Բաղարի Սերպերուն, ալպանացիներուն և թուրքերուն 25000 վեցհարուածեան կը բաշխէ եղբի . Այս զէնքերը ասկէ 3 տարի առաջ Ռուսիոյ Ցարը՝ Չէրնակօրայի պարգեւած էր . Վրէն, նայի կառավարութիւնը երբ գալիք վտանգը կը մատնանչէ ու կը զգուշացնէ, իշխան Նիքօլան կը պատասխանէ թէ՛ նա պարտաւոր է որպէս Սլաւեան իշխան մը իր եղբայրները զինել .

Գրական, Հասարակական, Քաղաքական և Տնտեսական	ՊՐՇԱԼՆՅԱ
Բաժանորդագրութեան պայմանները	
Տարեկան	18 ֆր. 14 մարկ, 14 շիլլ. 7 ցոլլ
Չորեկան	11 " 9 " 9 " 4 "
Վեց ամիսը	7 " 6 " 6 " 2 "
Երեք ամիսը	4 " 3 " 3 " 1 "
Մէկ ամիսը	2 " 2 " 2 " 1 "
Տարեկան բաժանորդները կարող են վճարել մաս-մաս	
Հասցէ՝ Խմբագրութիւն «Արշալոյս» թերթի փոփոխ	